# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Թեոֆարմա Իմպորտ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ԵԱՃԱՊՁԲ-2023/52 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | 1) Priorix 2) Priorix 3) rHA M-M-R II 4)M-M-R II | 1) Priorix 2) Priorix 3) rHA M-M-R II 4)M-M-R II | 1)GlaxoSmithKline Biologicals SA 2)SmithKline Beecham Ltd (trading as GlaxoSmithKline UK) 3) Merck Sharp & Dohme LLC 4)Merck Sharp & Dohme LLC | ԿԿԽ պատվաստանյութ /կարմրուկի, կարմրախտի, խոզուկի դեմ/: 1 և/կամ 2 դեղաչափ շշիկներով(սրվակներով)՝ կարմրուկի, կարմրախտի, խոզուկի դեմ համակցված կենդանի ատենուացված պատվաստանյութ, խոզուկի բաղադրիչը՝ Ջերիլ Լին (Jeryl Lynn) շտամով, նախատեսված 12 ամսեկան և բարձր տարիքի անձանց համար(կարող է կիրառվել նաև 9-12 ամսեկան երեխաների համար՝ հատուկ հանգամանքներում, որոնք նշված են պատվաստանյութերի ներդիր թերթիկում և SPC-ում): Ներկրվող չափաքանակի հետ տեղափոխման ընթացքում ջերմային ռեժիմը գրանցող էլեկտրոնային սարքերի կամ կրիչների առկայություն, պատվաստանյութի արկղի նշանադրումը՝ կոտրվող, տեղափոխման և պահպանման ընթացքում +2-+8°C |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ջերմաստիճանի ապահովում: Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից նախաորակավորման հավաստագրի և/կամ Դեղերի եվրոպական գործակալության կողմից գրանցման առկայություն: Յուրաքանչյուր սերիայի որակի հավաստագրի առկայություն և նաև սերիայի բացթողման հավաստագիրը (Lot Release Certificate)՝ տրված արտադրող երկրի իրավասու կարգավորող մարմնի կողմից և ամփոփ արձանագրությունը՝ տրված արտադրող կազմակերպության կողմից: Պատվաստանյութի մատակարարումը հետևյալ փաստաթղթերով՝ ավիաբեռնագիր (AWB), հաշիվ ապրանքագիր, փաթեթավորման ցանկ (Packing list): Ներմուծման հավաստագրի տրամադրման համար պատվաստանյութի գրանցված լինելը պարտադիր չէ: Պատվաստանյութի պիտանելիության ժամկետը մատակարարման պահին՝ ա) ենթակետ՝ 2,5 տարի և ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանիության ժամկետով, բ) ենթակետ՝ առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը կամ դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետը, հանձնելու պահին դեղի մնացորդային պիտանիության ժամկետը սահմանվում է պատվիրատուի կողմից, այն է առնվազն 12 ամիս ժամկետով: Գնման առարկայի պահպանումը և տեղափոխումն իրականացվում է համաձայն վերջիններիս արտաքին փաթեթի կամ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ներդիր-թերթիկի ցուցումների: Դեղերը մատակարարելիս՝ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննության արդյունքների վերաբերյալ եզրակացություն: Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կարիքների համար, հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, կարող են ձեռք բերվել պետության կարիքների համար լիազոր մարմնի հատուկ թույլտվությամբ կիրառվող չգրանցված դեղեր, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված միջազգային մասնագիտական կազմակերպություն սահմանելու մասին» N 172-Ա որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության անդամ երկրում կամ ունեն Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում: Նման պարագայում նախատեսվում է, որ ընտրված մասնակիցը պայմանագրի և որակավորման ապահովումների հետ միաժամանակ չգրանցված դեղերի համար պարտադիր ներկայացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված հավաստող տեղեկանք` Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի N 172-Ա որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության անդամ երկրում գրանցված լինելու կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ունենալու մասին (Հիմք. Հայաստանի Հանրապետության Կառավարության «2013 թվականի մայիսի 2-Ի N 502-Ն որոշում): Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից` ք. Երևան, Դավիթ Մալյան 37 հասցեով: Հայաստանի Հանրապետության ռեզիդենդ չհանդիսացող կազմակերպությունները պարտավոր են մատակարարումն իրականացնել ք.Երևան, Դավիթ Մալյան 37 հասցեով ԴիԴիՓի ինկոտերմսի (DDP Incoterms) պահանջներին համապատասխան: Գնման առարկայի պահպանումը և տեղափոխումն իրականացվում է համաձայն վերջիններիս արտաքին փաթեթի կամ ներդիր-թերթիկի ցուցումների: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Теофарма Импорт ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/52 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | |